

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
„13,, 05 2004 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 11704113

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

3 մարտի 2004 թվականի N 16-Ն

ՀՀՇՆ IV-11.03.01-04 (ՄՍՆ 3.02.01-2002) "ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ"
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքի 10.1 հոդվածի եւ ՀՀ կառավարության
2003 թ. փետրվարի 20-ի "Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության
նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված
մարմնի իրավասություն վերապահելու մասին" N 156-Ն որոշման համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել եւ 2004 թ. հունիսի 15-ից Հայաստանի Հանրապետության
տարածքում գործողության մեջ դնել ՀՀՇՆ IV-11.03.01-04 (ՄՍՆ 3.02.01-2002)
"Արտադրական շենքեր" շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:

2. 2004 թ. հունիսի 15-ից Հայաստանի Հանրապետության տարածքում ուժը
կորցրած ճանաչել ՍՆԻՊ 2.09.02-85* "Արտադրական շենքեր" շինարարական նորմերը:

ՀՀՇՆ IV-11.03.01-04
(ՄՄՆ 3.02.01-02)

Հավելված
ՀՀ քաղաքաշինության նախարարի
առ 3 մարտի 2004 թ.
թիվ 16-Ն հրամանի

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ

ՀՀՇՆ IV-11.03.01-04 (ՄՄՆ 3.02.01-02)

Գործարկման թվականը 2004-06-15

1 ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1 Սույն նորմերը տարածվում են հրդեհային վտանգավորության Գ 5.1 /ՀՀՇՆ II-8.04.01/ գործառական դասի արտադրական շենքերի, արտադրական եւ լաբորատոր սենքերի եւ արհեստանոցների, այդ թվում՝ այլ հրդեհային վտանգավորության գործառական դասի շենքերում ներկառուցված սենքերի նախագծման, կառուցման եւ շահագործման բոլոր փուլերի վրա:

1.2 Սույն նորմերը չեն տարածվում պայթուցիկ նյութերի եւ պայթեցման միջոցների արտադրության ու պահման շենքերի եւ սենքերի, ռազմական նշանակության, մետրոպոլիտենների ստորգետնյա եւ լեռնային հանքավորվածքների կառուցվածքների վրա:

1.3 Կազմակերպություններում հաշմանդամների աշխատանքի կիրառման դեպքում անհրաժեշտ է պահպանել հաշմանդամության տեսակից կախված սույն նորմերի 5.6, 5.8, 6.10, 6.11 եւ 6.12 կետերում բերված լրացուցիչ պահանջները:

Կազմակերպություններում հաշմանդամների աշխատանքի օգտագործման համար Ա եւ Բ կարգի մասնագիտացված արտադրամասերի /տեղամասերի/ ստեղծում չի թույլատրվում:

2 ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ

Սույն նորմերում կատարված են հղումներ՝ հետեւյալ նորմատիվային փաստաթղթերին.

ՀՀՇՆ II-8.04.01-97 Շենքերի եւ կառուցվածքների հրդեհային անվտանգությունը,

ՀՀՆ IV-12.02.02-00 Ջեռուցում, օդափոխում եւ օդի լավորակում,

ՀՀՇՆ IV-11.03.02 (ՄՄՆ II-3.02-02) Պահեստային շենքեր,

ՀՀՇՆ II-8.03-96 Արհեստական եւ բնական լուսավորում,

"Հրդեհային անվտանգության կանոններ", հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության 27.05.2003թ. թիվ. 524-Ն հրամանով:

3 ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն նորմերում ընդունված են հետեւյալ տերմիններն ու սահմանումները.

Արտադրական շենքի ընդհանուր մակերես՝ շենքի բոլոր հարկերի /վերգետնյա՝ ներառված տեխնիկական հարկերը, որմնախարսխահարկը եւ նկուղային հարկը/, չափված արտաքին պատերի ներքին մակերեսների սահմաններում /կամ եթե չկան արտաքին պատեր՝ ծայրային սյուների առանցքներով/, թունելների, ներքին հարթակների,

կիսահարկերի, ներքին հարկաշարերի բոլոր հարկաբաժինների, թեքահարթակների եւ այլ շենքերի միջեւ անցասարահների /հորիզոնական կտրվածքում/ եւ անցումների մակերեսների գումար:

Շենքի ընդհանուր մակերեսի մեջ չեն ընդգրկվում` մինչեւ ելուստված կոնստրուկցիաների տակ 1,8 մ բարձրությամբ տեխնիկական նկուղների մակերեսները /որտեղ հաղորդակցուղիների սպասարկման համար անցումներ չեն պահանջվում/, կախովի առաստաղների վրայի, ինչպես նաեւ ենթամբարձչային ուղիների, ամբարձիչների, փոխակրիչների, միառելիների եւ լուսամփոփների սպասարկման հարթակների մակերեսները,

կիսահարկ` շենքի ներսում հատակից վեր տեղադրված հարթակ, որի վրա տեղաբաշխված են տարբեր նշանակության /արտադրական, վարչակենցաղային կամ ինժեներական սարքավորանքի համար/ սենքեր,

ներդիր /ներկառուցում/ միհարկանի արտադրական շենքում` շենքի երկ- կամ բազմահարկ մասը, որը տեղադրված է միահարկ շենքի սահմաններում նրա ամբողջ բարձրությամբ եւ լայնությամբ /ներդիր/ կամ բարձրության ու լայնության որոշ մասով /ներկառուցում/ եւ առանձնացված է պատող կոնստրուկցիաներով,

շենքի ինժեներական սարքավորանք` սարքերի, ապարատների, մեքենաների եւ հաղորդակցուղիների համակարգ, որն ապահովում է հեղուկների, գազերի, էլեկտրաէներգիայի մատուցումը եւ հեռացումը /ջրմուղի, գազամատակարարման, ջեռուցման, էլեկտրական, կոյուղու, օդափոխության սարքավորանք/,

հարթակ` շենքի ներսում կամ նրանից դուրս տեղադրված միհարկաբաժնային շինություն /առանց պատերի/, որը հենված է ինքնուրույն հենարանների վրա եւ նախատեսված է սարքավորանքի տեղադրման, սպասարկման կամ նորոգման համար,

շենքի հարկայնություն` շենքի հարկերի քանակը, որն ընդգրկում է շենքի վերգետնյա բոլոր հարկերը, տեխնիկական հարկը, ինչպես նաեւ որոնախարսխահարկը` եթե նրա ծածկի վերին միջը գտնվում է գետնի հատակագծային միջին միջից ոչ պակաս 2 մ բարձրության վրա,

հարկաշար` շենքի ներսում կամ նրանից դուրս ազատ կանգնած բազմահարկ հիմնակմախքային շինություն /առանց պատերի/, նախատեսված տեխնոլոգիական կամ այլ սարքավորանքի տեղակայման եւ սպասարկման համար:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն նորմերի հակահրդեհային անվտանգության պահանջները կարգավորվում են ըստ ՀՀՇՆ II-8.04.01:

4.2 Շենքեր նախագծելիս անհրաժեշտ է.

ա/ հարկերի քանակը /շենքի բարձրությունը/ ընդունել սույն նորմերի 7.1 կետում նշված սահմաններում, հիմնվելով տարբեր բարձրությամբ /հարկայնությամբ/ շենքերում արտադրության տեղաբաշխման տեխնիկատնտեսական ցուցանիշների համեմատման արդյունքների վրա, հաշվի առնելով նաեւ ճարտարապետական լուծումների /հատակագծային եւ ծավալատարածական/ բարձր մակարդակը ըստ 4.3 կետի.

բ/ լուսաբացվածքների մակերեսն ընդունել ըստ ՀՀՇՆ II-8.03, հաշվի առնելով 5.9 կետի պահանջները.

գ/ շենքը նախատեսել առանց լուսամուտների, եթե դա թույլատրվում է տեխնոլոգիական եւ սանհտարահիգիենիկ պահանջներով եւ տնտեսապես նպատակահարմար է.

դ/ ծավալահատակագծային լուծումները մշակելիս` անհրաժեշտ է հաշվի առնել թրթռակտիվ սարքավորանքի կամ տատանման արտաքին աղբյուրների դինամիկ ազդեցությունների նվազեցումը շինարարական կոնստրուկցիաների, տեխնոլոգիական գործընթացի, ինչպես նաեւ մարդկանց վրա:

4.3 Շենքի ճարտարապետական լուծումները անհրաժեշտ է ընդունել հաշվի առնելով շինարարությունն իրականացման տեղանքի քաղաքաշինական, կլիմայական, սեյսմիկ եւ երկրաձեւաբանական պայմանները եւ շրջակա կառուցապատման բնույթը:

4.4 Պայթյունահրդեհային եւ հրդեհային վտանգավորությամբ սենքերը եւ շենքերը ստորաբաժանվում են /Ա, Բ, Վ1-Վ4, Գ, Դ/ կարգերի, կախված այդ սենքերում եւ շենքերում տեղադրված տեխնոլոգիական գործընթացներից եւ այնտեղ գտնվող /շրջանառվող/ նյութերի հատկություններից:

Շենքերի եւ սենքերի կարգը սահմանվում է նախագծի տեխնոլոգիական մասով`

ըստ "Հրդեհային անվտանգության կանոնների", հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության առ 27.05.2003 թ. թիվ 524-Ն հրամանով:

4.5 Շենքի հարկայնությունը սահմանելիս հաշվի են առնվում ցանկացած նիշի վրա շենքի հարկի մակերեսի 40% ավելի մակերեսով հարթակները, կիսահարկերի հարկաբաժինները եւ հարկաշարերը:

4.6 Հրդեհաշիջման ավտոմատ կայանքները, հակահրդեհային ինքնաշխատ ազդանշանումը եւ հրդեհի ազդարարման համակարգը անհրաժեշտ է նախատեսել ըստ 4.4-ում նշված պահանջների:

5 ԾԱԿԱԼԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

5.1 Սենքերի բարձրությունը հատակից մինչեւ ծածկի /վերնածածկի/ ելուստված կոնստրուկցիաները պետք է լինի 2,2 մ ոչ պակաս, բարձրությունը հատակից մինչեւ հաղորդակցուղիների եւ սարքավորանքի ելուստված մասերը՝ մարդկանց կանոնավոր անցման տեղերում եւ էվակուացման ուղիներում պետք է լինի 2 մ ոչ պակաս, իսկ մարդկանց ոչ կանոնավոր անցման տեղերում՝ 1,8 մ ոչ պակաս: Ավտոմոբիլների ներանցման անհրաժեշտության դեպքում երթանցի բարձրությունը մինչեւ կոնստրուկցիաների, հաղորդակցուղիների եւ սարքավորանքի ելուստված մասերի տակը պետք է լինի 4,2 մ ոչ պակաս, իսկ հրդեհաշեջ մեքենաների համար՝ 4,5 մ ոչ պակաս:

5.2 Արտադրական այն շենքերում եւ սենքերում, որտեղ տեխնոլոգիական պայմաններով պահանջվում է օդային միջավայրի /ջերմային, օդափոխության/ կայուն հարաչափերի պահպանում եւ ինժեներական սարքավորումների ու հաղորդակցուղիների տեղադրում, թույլատրվում է նախատեսել.

ա/ կախովի առաստաղներ եւ կեղծ հատակ՝ երբ հաղորդակցուղիներին մոտենալու համար, սպասարկող անձնակազմի անցումներ չեն պահանջվում: Նշված հաղորդակցուղիների սպասարկման համար կարելի է նախագծել ելանցքեր եւ ուղղաձիգ մետաղական սանդուղքներ.

բ/ տեխնիկական հարկեր՝ երբ տեխնոլոգիայի պայմանների համաձայն այդ հարկերում տեղադրված ինժեներական սարքավորանքի, հաղորդակցուղիների եւ օժանդակ տեխնոլոգիական սարքվածքների սպասարկման համար պահանջվում է անցումների կառուցում, որոնց բարձրությունն ընդունվում է 5.1 կետի համապատասխան:

5.3 Երկաթուղային գծերի ներանցումը շենք թույլատրվում է նախատեսել նախագծի տեխնոլոգիական մասին համապատասխան, հաշվի առնելով սույն նորմերի 7.5 կետի պահանջները:

5.4 Երկաթուղային գծերի ռելսագլխիկների գազաթը պետք է լինի մաքուր հատակի նիշի վրա:

5.5 Արտադրական շենքերում տեղաբաշխված հումքի, կիսապատրաստուկների եւ պատրաստի արտադրանքի պահեստները, ինչպես նաեւ կառամատույցները /թեքահարթակները/ անհրաժեշտ է նախագծել՝ հաշվի առնելով ՀՀՇՆ IV-11.03.02 պահանջները:

5.6 Գետնի հատակագծային նիշից մինչեւ վերին հարկի /չհաշված տեխնիկական հարկը/ մաքուր հատակի նիշը 15 մ-ից ավել բարձրությամբ եւ 15 մ եւ ավելի բարձրության վրա մշտական աշխատատեղերի կամ հերթափոխում երեք անգամ եւ ավելի սպասարկում պահանջող սարքավորանքի առկայության դեպքում, բազմահարկ շենքերում անհրաժեշտ է նախատեսել մարդատար վերելակներ: Բեռնատար վերելակներ անհրաժեշտ է նախատեսել նախագծի տեխնոլոգիական մասին համապատասխան:

Վերելակների քանակը եւ ամբարձունակությունն ընդունվում է՝ կախված ուղեւորահոսքից եւ բեռնահոսքից: 15 մետրից բարձր տեղադրված հարկերում թվով 30-ից ոչ ավել աշխատողների /առավել բազմամարդ հերթափոխում/ առկայության դեպքում անհրաժեշտ է նախատեսել մեկ վերելակ:

Երկրորդ եւ վերին հարկերում բազկաթռ-սայլակներ օգտագործող հաշմանդամների աշխատանքի համար նախատեսված սենքերի առկայության դեպքում, երբ հնարավոր չէ առաջին հարկում հաշմանդամների համար կազմակերպել աշխատատեղեր, շենքում անհրաժեշտ է նախատեսել մարդատար վերելակ: Վերելակի խցիկի չափսերը պետք է լինեն ոչ պակաս՝ լայնությունը 1,1 մ, խորությունը՝ 2,1 մ եւ 0,85 մ ոչ պակաս լայնությամբ դռնատեղ:

5.7 Նկուղների ելքերը անհրաժեշտ է նախատեսել ամբարձիչատրանսպորտային սարքավորանքի աշխատանքի գոտուց դուրս:

5.8 Նախամուտքերի եւ նախամուտք-անցախցերի լայնությունը պետք է ընդունել որմնանցքերի լայնությունից ավելի՝ ոչ պակաս, քան 0,5 մ (0,25 մ բացվածքի ամեն կողմից), իսկ խորությունը, դռան կամ դարբասի փեղկից ավելի՝ 0,2 մ ոչ պակաս, բայց ոչ պակաս 1,2 մ:

Բազկաթոռ-սայլակներից օգտվող հաշմանդամ աշխատողների առկայության դեպքում նախամուտքի եւ նախամուտք-անցախցի խորությունը պետք է ընդունել ոչ պակաս 1,8 մ:

5.9 Ա եւ Բ կարգի սենքերում արտաքին պատող կոնստրուկցիաները անհրաժեշտ է նախատեսել դյուրանետվող:

Որպես դյուրանետվող կոնստրուկցիա անհրաժեշտ է օգտագործել ապակեպատ պատուհաններ եւ երդիկներ: Ապակեպատված մակերեսների անբավարար լինելու դեպքում թույլատրվում է որպես դյուրանետվող կոնստրուկցիա օգտագործել պողպատե, ալյումինե եւ ասբոցեմենտի թերթերով եւ արդյունավետ ջերմապահպանիչներով ծածկերի կոնստրուկցիաներ:

Դյուրանետվող կոնստրուկցիայի մակերեսը որոշվում է հաշվարկով: Հաշվարկային տվյալների բացակայության դեպքում, դյուրանետվող կոնստրուկցիայի մակերեսը պետք է կազմի ոչ պակաս 0,05 մ² Ա կարգի եւ ոչ պակաս 0,03 մ²՝ Բ կարգի սենքերի 1 մ³ ծավալի համար:

Պատուհանի ապակին համարվում է դյուրանետվող կոնստրուկցիա 3, 4 եւ 5 մմ հաստության եւ /համապատասխանաբար/ 0,8, 1 եւ 1,5 մ² ոչ պակաս մակերեսների դեպքում: Ամրանավորված ապակին դյուրանետվող կոնստրուկցիա չի համարվում: Ծածկի կոնստրուկցիայի դյուրանետվող հատվածում փաթեթային գորգը պետք է կտրատվի 180 մ² մակերեսով քարտերի: Ծածկի դյուրանետվող կոնստրուկցիայի զանգվածի հաշվարկային բեռնվածքը պետք է կազմի ոչ ավելի 0,7 կՊա (70 կգ/մ²):

5.10 Բեռնամբարձիչների սպասարկման համար նախատեսված անցասրահները, հարթակները եւ սանդուղքները անհրաժեշտ է նախագծել ըստ բեռնամբարձիչների տեխնիկական փաստաթղթերի եւ սույն նորմերի 5.18 կետի պահանջների:

5.11 Պատուհանների եւ երդիկների ապակեպատվածքի նորոգման եւ մաքրման համար, երբ հնարավոր չէ կիրառել շարժական կամ տեղափոխվող հատակադիր գույքային հարմարանքներ (հենովի ելարաններ, գլորվող հարթակներ, փոխագուցավոր վերհաններ) տեխնոլոգիական սարքավորանքի կամ շենքի ընդհանուր բարձրության պատճառով, անհրաժեշտ է նախատեսել անշարժ սարքվածքներ, որոնք ապահովում են նշված աշխատանքների անվտանգ կատարումը: Այդ սարքվածքների կիրառումը հիմնավորվում է նախագծի տեխնոլոգիական մասում:

5.12 Երդիկների տեղադրման անհրաժեշտությունը եւ նրանց տիպը որոշվում է նախագծով, կախված տեխնոլոգիական գործընթացի առանձնահատկություններից, սանիտարահիգիենիկ եւ էկոլոգիական պահանջներից, հաշվի առնելով շինարարության շրջանի կլիմայական պայմանները:

5.13 Երդիկները պետք է լինեն չքամահարվող, երդիկների երկարությունը պետք է լինի 120 մ ոչ ավել: Երդիկների կողաձակատների եւ երդիկի կողաձակատի ու արտաքին պատի միջեւ տարածությունը պետք է լինի 6 մ ոչ պակաս: Երդիկների փեղկերի բացումը պետք է լինի մեխանիզացված (սենքի ելքի մոտ բացման մեխանիզմի միացումով) եւ ձեռքի դեկավարման կրկնակմամբ:

5.14 Սիլիկատային թերթավոր ապակիով, ապակեկապոցներով, պրոֆիլային /տրամատային/ ապակիով ապակեպատված զենիթային երդիկների տակ, ինչպես նաեւ ուղղանկյուն լուսաօղավորման երդիկների ներքին կողմի երկայնքով անհրաժեշտ է նախատեսել մետաղական պաշտպանիչ ցանցի տեղադրում:

5.15 Ներքին ջրահեռացմամբ շենքերում, տանիքում որպես պաշտպանակ թույլատրվում է տեղադրել քիվապատեր: Եթե քիվապատի բարձրությունը պակաս է 0,6 մ, այն, տանիքի հարթությունից մինչեւ 0,6 մ բարձրությամբ, պետք է լրացվի ցանցավոր պաշտպանակով:

5.16 Հեռագործ եւ ավտոմատ կերպով բացվող դարպասները պետք է ապահովված լինեն նաեւ ձեռքով բացվելու հնարավորությամբ: Վերգետնյա տրանսպորտի համար, դարպասի լուսանց չափերը պետք է գերազանցեն տրանսպորտային միջոցների եզրաչափերը (բեռնված վիճակում)՝ ոչ պակաս 0,2 մ բարձրությամբ եւ 0,6 մ լայնությամբ:

5.17 Սանդղավանդակներում սանդղաբազուկների թեքությունը սանդղամատի 0,3

մ լայնության դեպքում պետք է ընդունել 1:2 ոչ ավել, իսկ նկուղային հարկում եւ ձեղնահարկում սանդղամատի 0,26 մ լայնության դեպքում թույլատրվում է սանդղաբազուկի թեքությունն ընդունել 1:1,5 հարաբերությամբ:

5.18 Ներքին բաց սանդղավանդակները (սանդղավանդակի պատերի բացակայության դեպքում) պետք է ունենան 1:1 ոչ ավել թեքություն: Մեկ անձի համար նախատեսվող աշխատատեղերին մոտենալու համար, բաց սանդղուղքների թեքությունը թույլատրվում է մեծացնել մինչեւ 2:1: Վերելքի 10 մ ոչ ավելի դեպքում, սարքավորանքի գնման համար թույլատրվում է նախագծել 0,6 մ լայնությամբ ուղղաձիգ սանդղուղքներ:

5.19 Հենաշարժական ապարատի խանգարումով հաշմանդամ աշխատողների առկայության դեպքում, էվակուացման ուղիների վրա սանդղուղքների թեքությունը պետք է լինի 1:2 ոչ ավել:

5.20 Չեռնի հատակագծային նիշից մինչեւ քիվի կամ քիվապատի վերին նիշը 10 մ եւ ավել բարձրությամբ շենքի համար հարկավոր է նախագծել մեկ ելք դեպի տանիք (յուրաքանչյուր լրիվ կամ ոչ լրիվ 40000 մ² տանիքի համար), այդ թվում՝

ա/ միահարկ շենքի համար՝ արտաքին բաց մետաղական սանդղուղքով.

բ/ բարձրահարկ շենքի համար՝ սանդղավանդակից:

Այն դեպքում, երբ վերին հարկի սահմաններում նպատակահարմար չէ ունենալ սանդղավանդակ թույլատրվում է հատակագծային նիշից մինչեւ վերին հարկի մաքուր հատակի նիշը 30 մ ոչ ավել բարձրություն ունեցող շենքերի համար նախագծել արտաքին պողպատյա բաց սանդղուղք՝ այդ սանդղուղքի հարթակով տանիք դուրս գալու համար:

6 ՏԱՐԱՀԱՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՍԵՆՔԵՐԻՑ

6.1 IV եւ V աստիճանի հրակայունության, h2 եւ h3 կարգի կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորությամբ շենքերի արտադրական սենքերի միջով տարահանման ելքեր չեն նախատեսվում:

Ա եւ Բ կարգերի սենքերի ինժեներական սարքավորանքի սպասարկման համար նախատեսված առանց մշտական աշխատատեղերի սենքի (որի միակ տարահանման ելքը անցնում է նույն կարգի սենքի միջով) ամենահեռավոր կետի հեռավորությունը մինչեւ ելք չպետք է գերազանցի 25 մ:

Տարահանման ուղիները Վ, Գ եւ Դ կարգի սենքերից չպետք է ընդգրկեն Ա եւ Բ կարգի սենքերի նախամուտք - անցախցերով անցնող տեղամասերը:

6.2 Տարահանման ելքերը սանդղավանդակներից, որոնք տեղադրված են չորս հարկից ոչ բարձր Վ4, Գ եւ Դ կարգի սենքերով ներդիրներում եւ ներկառույցներում, թույլատրվում է նախատեսել Վ4, Գ եւ Դ կարգի սենքերի միջով դեպի դուրս այն դեպքում, երբ ելքերը տեղադրված են ներդիրների եւ ներկառույցների երկու կողմից /եթե ներդիրը կամ ներկառույցը բաժանում է շենքը մեկուսացված մասերի/:

6.3 h0 եւ h1 դասի հրդեհային վտանգավորության I, II, III եւ IV աստիճանի հրակայունությամբ շենքերի կիսահարկերում եւ ներդիրներում (ներկառույցներում) տեղաբաշխված Վ4, Գ եւ Դ կարգի սենքերի, ինչպես նաեւ շենքի ինժեներական սարքավորանքի տեղաբաշխման համար նախատեսված եւ առանց մշտական աշխատատեղերի h2 եւ h3 դասի հրդեհային վտանգավորության IV աստիճանի հրակայունությամբ միահարկ շարժունակ շենքերի կիսահարկերի տարահանման ելքերի համար թույլատրվում է Վ, Գ եւ Դ կարգի սենքերում նախատեսել չայրվող նյութերից 2-րդ տիպի սանդղուղքներ: Ընդ որում, ինժեներական սարքավորանքով սենքերի առավել հեռացված կետի հեռավորությունը մինչեւ տարահանման ելքը շենքից դուրս, չպետք է գերազանցի 1 աղյուսակում սահմանված արժեքները: Նշված սենքերից թույլատրվում է նախատեսել մեկ ելք չայրվող նյութերով սարքված 2-րդ եւ 3-րդ տիպի սանդղուղքների վրա, որտեղ հեռավորությունը սենքի առավել հեռացված կետից մինչեւ ելքն աստիճանի վրա չի գերազանցում 25 մ:

6.4 28 մ ոչ ավել /ՀՀՇՆ II-8.04/ բարձրությամբ շենքերում հարկից որպես երկրորդ տարահանման ելք կարող են կիրառվել 3-րդ տիպի սանդղուղքներ, եթե յուրաքանչյուր հարկում (բացի առաջինից) աշխատողների թիվն առավել բազմամարդ հերթափոխում չի գերազանցում՝

ա/ 15 մարդուց՝ ցանկացած կարգի սենքերով բազմահարկ շենքերում.

բ/ 50 մարդուց՝ Վ1-Վ3 կարգի երկհարկ շենքերում.

գ/ 100 մարդուց՝ Վ4, Գ եւ Դ կարգի երկհարկ շենքերում:

6.5 Սույն նորմերի 7.4-ում նախատեսված նկուղի յուրաքանչյուր մասից անհրաժեշտ է նախատեսել ոչ պակաս երկու տարահանման ելք:

6.6 Սենքի առավել հեռացված աշխատատեղից մինչև սենքից անմիջապես դուրս բացվող մոտակա տարահանման ելքի կամ սանդղավանդակի հեռավորությունը, չպետք է գերազանցի 1 աղյուսակում բերված մեծություններին: 1 աղյուսակում նշված 1000 մ2 եւ ավել մակերեսով սենքերի հեռավորությունն ընդգրկում է ուղու երկարությունը միջանցքով մինչև ելքը դեպի դուրս կամ սանդղավանդակ:

Եթե սենքի տարահանման ելքը տանում է դեպի միջանցք, դուրս կամ սանդղավանդակ միջանցիկ սենքի միջով, ապա հեռավորությունը այդ սենքի առավել հեռացված աշխատատեղից մինչև հարակից սենքի ելքը ընդունվում է հարակից սենքերից մեկի առավել վտանգավոր կարգի համաձայն:

Մարդկային հոսքի խտությունը որոշվում է ընդհանուր անցումով տարահանվող մարդկանց թվի եւ այդ անցման մակերեսի հարաբերությամբ:

Ա եւ Բ կարգի սենքերի համար հեռավորությունները սահմանված են դյուրաբացվառվող կամ այրվող հեղուկների տարածման 50 մ2 մակերեսին հավասար հաշվարկով, տարածման մակերեսի թվային այլ արժեքների դեպքում 1 աղյուսակում տրված հեռավորությունները բազմապատկվում են 50/F գործակցով, որտեղ F` տարածման հնարավոր մակերեսն է, այն որոշվում է նախագծի տեխնոլոգիական մասում:

Սենքերի ծավալների միջանկյալ նշանակությունների դեպքում հեռավորությունը որոշվում է գծային միջարկմամբ:

Հեռավորությունները սահմանված են մինչև 6 մ բարձրությամբ սենքերի համար /միահարկ շենքերի բարձրությունն ընդունվում է մինչև ֆերմաների տակը/, 6 մ ավել բարձրությամբ սենքերի համար հեռավորությունները մեծացվում են` սենքի 12 մ բարձրության դեպքում` 20%, 18 մ դեպքում` 30%, 24 մ` 40%, բայց ոչ ավել 140 մ Ա եւ Բ կարգի սենքերի համար, եւ 240 մ` Բ կարգի սենքերի համար, սենքերի բարձրությունների միջանկյալ նշանակությունների դեպքում հեռավորությունների ավելացումը որոշվում է գծային միջարկմամբ:

1-4 աղյուսակներում սահմանված են նորմեր` շենքերի հրակայունության աստիճանի եւ հրդեհային վտանգավորության դասի նախատեսված զուգորդումներով շենքերի եւ հրդեհային հատվածամասերի կարգերի համար: Սույն աղյուսակում չնախատեսված այլ զուգորդումների դեպքում, հեռավորություններն ու մարդկանց քանակը ընդունվում են սենքի տվյալ կարգի համար աղյուսակներում բերված ցուցանիշներից վատագույնը կամ համաձայնեցվում են ՀՀՇՆ II-8.04.01 1.6 կետով սահմանված կարգով:

(6.6-րդ կետը փոփ. 24.06.04 թիվ 59-Ն հրաման)

6.7 Ներքին հարկաշարերն ու հարթակները պետք է ունենան ոչ պակաս երկու բաց պողպատյա սանդուղք: Թույլատրվում է նախագծել մեկ սանդուղք, եթե յուրաքանչյուր հարկաշարի հարկաբաժնի կամ հարթակի հատակի մակերեսը Ա, Բ կարգի սենքերի համար չի գերազանցում 108 մ2 եւ 400 մ2` Վ1-Վ4, Գ եւ Դ կարգի սենքերի համար:

Հարթակների եւ հարկաշարերի առավել հեռացած կետի հեռավորությունը մինչև շենքից դուրս տանող մոտակա տարահանման ելքը պետք է ընդունել ըստ 1 աղյուսակի, հաշվի առնելով տարահանման ուղու երկարությունը 2-րդ տիպի սանդուղքով:

Աղյուսակ 1

Սենքի Սենքի Հրակայունության Շենքի Հեռավորությունը, մ, ընդհանուր	Թավալը կարգը աստիճանը կոնստրուկտիվ անցումում մարդկային հոսքի		
	հազ. մ3		հրդեհային խտության ժամանակ, մարդ/մ2
			վտանգավոր-
			ռության մինչև 1 1 ավել 3 ավել
			աստիճանը մինչև 3 մինչև 5

	Ա, Բ II, III, IV	CO	40 25 15
Մինչև			
15	Վ1-Վ3	II, III, IV,	CO1, 100 60 40
		III, IV,	C1, 70 40 30
		IV	C2, C3 50 30 20

		U, P		I, II, III, IV		CO		60		35		25	
30													
		Վ1-Վ3		I, II, III, IV,		CO		145		85		60	
				III, IV		C1		100		60		40	
		U, P		I, II, III, IV		CO		80		50		35	
40													
		Վ1-Վ3		I, II, III, IV,		CO		160		95		65	
				III, IV		C1		110		65		45	
		U, P		I, II, III, IV		CO		120		70		50	
50													
		Վ1-Վ3		I, II, III, IV,		CO		180		105		75	
				III, IV		C1		160		95		65	
		U, P		I, II, III, IV		CO		140		85		60	
60 եւ													
ալել		Վ1-Վ3		I, II, III, IV,		CO		200		110		85	
				III, IV		C1		180		105		75	
		Վ1-Վ3		I, II, III, IV,		CO		240		140		100	
80 եւ													
ալել				III, IV		C1		200		110		85	
		Վ4, Գ		I, II, III, IV,		CO		չի		չի		չի	
Ծավալից													
անկախ				III, IV,		C1		160		95		65	
				V		չի		120		70		50	
						նորմա-							
						վորվում							
		Դ		I, II, III, IV,		CO, C1,		չի		չի		չի	
Նույնը													
				IV, V		C2, C3		160		95		65	

Մշտական աշխատատեղերով հարթակներից եւ հարկաշարերի հարկաբաժիններից, որոնց մակերեսը ցանկացած նիշի վրա գերազանցում է հարկի մակերեսի 40%, տարահանման ելքերը պետք է նախատեսվեն սանդղավանդակների միջով:

Տարահանման ելքերից մեկը թույլատրվում է նախատեսել 3-րդ տիպի սանդղղի վրա:

6.8 Մեկ կամ երկհարկ IV աստիճանի հրակայունության C2 եւ C3 դասի հրդեհային վտանգավորության շենքերի առավել հեռավոր աշխատատեղերի հեռավորությունը մինչեւ տարահանման ելքերը պետք է ընդունել ոչ ավել.

. միահարկ շենքերի Վ1-Վ3 կարգի սենքերում՝ 50 մ, Վ4, Գ եւ Դ կարգի սենքերում՝ 80 մ.

. երկհարկ շենքերի Վ1-Վ3 կարգի սենքերում՝ 40 մ, Վ4, Գ եւ Դ կարգի սենքերում՝ 60 մ:

Նշված հեռավորությունները թույլատրվում է մեծացնել 50%, եթե սարքավորանքով չզբաղեցված հատակի մակերեսն առավել բազմամարդ հերթափոխի մեկ աշխատողի համար սենքերում կազմում է 75 մ² եւ ավել:

Միահարկ Վ1-Վ4, Գ եւ Դ կարգի սենքերով շենքերում նշված հեռավորությունների պահպանման անհնարինության դեպքում, տարահանման ելքերն անհրաժեշտ է տեղադրել շենքի պարագծով, արտաքին պատերում՝ յուրաքանչյուր 72 մետրը մեկ:

Երկրորդ հարկից սանդղղով տարահանվող մարդկանց քանակից կախված, սանդղղի սանդղաբազկի լայնությունը, ինչպես նաեւ տարահանման ուղիների վրա

գտնվող դռների, միջանցքների եւ անցումների լայնությունը պետք է ընդունել 100 մարդու համար 0,6 մ հաշվարկից:

(6.8-րդ կետը փոփ. 24.06.04 թիվ 59-Ն հրաման)

6.9 Առավել հեռավոր, 1000 մ2 ոչ ավելի մակերեսով սենքի դռնից միջանցքով մինչեւ դուրս մոտակա ելքը կամ սանդղավանդակը հեռավորությունը չպետք է գերազանցի 2 աղյուսակում բերված մեծություններին:

Նույն հարկում տարբեր կարգի սենքերի տեղաբաշխման դեպքում, առավել հեռավոր սենքի դռնից, միջանցքով մինչեւ դուրս մոտակա ելքի կամ սանդղավանդակի հեռավորությունը որոշվում է առավել վտանգավոր կարգով:

Մարդկային հոսքի խտությունը միջանցքում որոշվում է սենքերից միջանցք տարահանվող մարդկանց քանակի եւ միջանցքի մակերեսի հարաբերությամբ, ընդ որում, սենքերից ընդհանուր միջանցք բացվող դռների դեպքում ընդհանուր միջանցքի լայնությունը պետք է ընդունվի փոքրացված.

ա/ դռան փեղկի կեսի չափով` դռների միակողմանի դասավորության դեպքում,
բ/ դռան փեղկի չափով` դռների երկկողմանի դասավորության դեպքում:

6.10 Սենքի տարահանման ելքի (դռան) լայնությունը անհրաժեշտ է ընդունել կախված այդ ելքից տարահանվող մարդկանց ընդհանուր քանակից եւ 3 աղյուսակով 1 մ ելքի համար սահմանված մարդկանց թվից, բայց ոչ պակաս 0,9 մ` աշխատողների թվում հենաշարժական ապարատի խախտումներով հաշմանդամների արևայության դեպքում:

Մարդկանց քանակը 1 մ լայնությամբ ելքի /դռան/ համար սենքերի ծավալի միջանկյալ նշանակությունների դեպքում որոշվում է միջարկմամբ (հնտերպոլյացիա):

6 մ ավելի բարձրությամբ սենքերից 1 մ լայնությամբ տարահանման ելքի /մուտքի/ դեպքում, տարահանվող մարդկանց քանակը ավելանում է` 12 մ բարձրության դեպքում 20%, 18 մ` 30%, 24 մ` 40%, սենքերի բարձրության միջանկյալ մեծությունների դեպքում 1 մ լայնությամբ ելքի համար մարդկանց քանակի ավելացումը որոշվում է միջարկմամբ:

Աղյուսակ 2

Ելքերի Շենքի Շենքի Շենքի Հեռավորությունը միջանցքով մ,	դասավոր- կարգը հրակայունության կոնստ- մինչեւ դրսի ելքը կամ մոտակա			
	րութ- աստիճանը րուկտիվ սանդղավանդակը, միջանցքում	լյուրը հրդեհա- մարդկային հոսքի համար, մարդ/մ2		
վտանգու-	թյունը մինչեւ 2 բարձր 3 բարձր 4 բարձր			
	2 մինչեւ 3 մինչեւ 4 մինչեւ 5			
Երկու Ա, Բ I, II, III, IV CO 60 50 40 35				
դրսի				
Ելքերի Վ1-Վ3 I, II, III, IV CO, 120 95 80 65				
կամ III, IV չի C1, 85 65 55 45				
սանդղա- նորմավորվում C2, C3 60 50 40 35				
վանդակ-				
ների Վ4, Գ, I, II, III, IV CO, 180 140 120 100				
միջեւ Դ III, IV չի C1, 125 100 85 70				
նորմավորվում C2, C3 90 70 60 50				
Փակու- Անկախ I, II, III, IV CO, 30 25 20 15				
դային կարգից III, IV չի C1, 20 15 15 10				
միջանց- նորմավորվում C2, C3 15 10 10 8				
քում				

Աղյուսակ 3

|Սենքի ծավալը |Սենքի |Սենքի |Սենքի կոնստրուկտիվ|Մարդկանց քանակը |
|հազ. մ3 |կարգը |հրակայունության |հրդեհային |միջանցքի |

	լաստիճանը	վտանգավորության	տարահանման ելքի
	դասը	/դռան/ 1 մ	
		լայնության վրա	
	Ա, Բ II, III, IV	CO	45
Մինչեւ 15	Վ1-Վ3 II, III, IV,	CO	110
	III, IV	C1	75
	չի նորմավորվում	C2, C3	55
30	Ա, Բ II, III, IV	CO	65
	Վ1-Վ3 II, III, IV,	CO	155
	III, IV	C1	110
40	Ա, Բ II, III, IV	CO	85
	Վ1-Վ3 II, III, IV,	CO	175
	III, IV	C1	120
50	Ա, Բ II, III, IV	CO	130
	Վ1-Վ3 II, III, IV,	CO	195
	III, IV	C1	135
60 եւ ավել	Ա, Բ II, III, IV	CO	150
	Վ1-Վ3 II, III, IV,	CO	220
	III, IV	C1	155
80 եւ ավել	Վ1-Վ3 II, III, IV,	CO	260
	III, IV	C1	220
Անկախ	Վ4, Գ II, III, IV,	CO	260
ծավալից	III, IV	C1	180
	չի նորմավորվում	C2, C3	130
Անկախ	Դ	չի նորմավորվում	չի նորմավորվում
ծավալից			

6.11 Միջանցքից դեպի դուրս կամ սանդղավանդակ բացվող տարահանման ելքի /դռան/ լայնությունը պետք է ընդունել՝ ելնելով այդ ելքից տարահանվող, 4 աղյուսակով սահմանված մարդկանց ընդհանուր քանակից եւ 1 մ լայնության ելքի /դռան/ վրա մարդկանց քանակով, բայց ոչ պակաս 0,8 մ, իսկ հենաշարժական ապարատի խախտումներով հաշմանդամ աշխատողների առկայության դեպքում՝ ոչ պակաս 0,9 մ:

Աղյուսակ 4

Առավել	Շենքի	Շենքի հրդեհային	Մարդկանց քանակը
հրդեհավտանգ	լաստիճանը	վտանգավորության	միջանցքի
խտնի կարգը	լաստիճանը	լայնության վրա	եվակուացման ելքի
		/դռան/ 1 մ	
		լայնության վրա	
Ա, Բ	II, III, IV	CO	85
Վ1-Վ3	II, III, IV	CO	175

IV	C1	120	
չի նորմավորվում	C2, C3	85	
44, Գ, Դ	II, II, III, IV	CO	260
IV	C1	180	
չի նորմավորվում	C2, C3	130	

6.12 Հենաշարժական ապարատի խախտումներով, աշխատող հաշմանդամների առկայության դեպքում սանդղաբազկի կայնությունը անհրաժեշտ է ընդունել 1,2 մ ոչ պակաս:

6.13 Չծխացող 2-տիպի սանդղավանդակները՝ Ս2 պետք է առանձնացվեն երկու սանդղաբազուկների բարձրությամբ հակահրդեհային խուլ միջնապատով, բարձրության յուրաքանչյուր 30 մ մեկ Գ եւ Դ կարգի շենքերում եւ 20 մ՝ Վ կարգի շենքերում /սանդղավանդակի ծավալից դուրս, սանդղավանդակի մի մասից մյուս մասն անցնելու հնարավորությամբ/:

6.14 Սենքերում եւ միջանցքներում անհրաժեշտ է նախատեսել ծխահեռացում՝ ՀՀՇՆ IV-12.02.01 պահանջներին համապատասխան:

6.15 Ծխահեռացման հաշվարկում հաշվի առնված բացվող երդիկները անհրաժեշտ է հավասարապես տեղաբաշխել վերնածածկի մակերեսի վրա:

7 ՀՐԴԵՀԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

7.1 Շենքի հրակայունության աստիճանը, կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորության դասը, բարձրությունը եւ հարկի մակերեսը հրդեհային հատվածամասի սահմաններում անհրաժեշտ է ընդունել ըստ 5 աղյուսակի:

Շենքերում հարթակների, հարկաշարերի եւ կիսահարկերի առկայության դեպքում, որոնց մակերեսները ցանկացած միջի վրա գերազանցում են սենքի հատակի մակերեսի 40%, հարկի մակերեսը որոշվում է ինչպես բազմահարկ շենքի համար՝ 4.5 սահմանված հարկերի թվով: Ավտոմատ հրդեհաշիջման կայանքներով սենքերի սարքավորման դեպքում թույլատրվում է 5 աղյուսակում նշված մակերեսները մեծացնել 100%, բացառությամբ CO եւ C1 հրդեհային վտանգավորության դասերի IV աստիճանի հրակայունության, ինչպես նաեւ V աստիճանի հրակայունության շենքերի:

Հարակից հարկերի ծածկերում տեխնոլոգիական բաց բացվածքների առկայության դեպքում, այդ հարկերի ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի 5 աղյուսակում նշվածից:

Վ կարգի շենքերում Վ1 կարգի սենքերի առկայության դեպքում, շենքի բարձրությունը եւ հարկի մակերեսը հրդեհային հատվածամասի սահմաններում անհրաժեշտ է պակասեցնել 5 աղյուսակում նշվածից 25%-ով:

Վերը նշված աղյուսակում սահմանված են շենքերի եւ հրդեհային հատվածամասերի կարգի համար հրակայունության աստիճանի եւ հրդեհային վտանգավորության դասի նախատեսված զուգակցումներով նորմեր: Այլ զուգակցումների դեպքում, որոնք նախատեսված չեն սույն աղյուսակում, հարկի մակերեսն ու բարձրությունն ընդունվում են տվյալ շենքի համար այդ ցուցանիշներից վատագույնները կամ համաձայնեցվում են ՀՀՇՆ II-8.04-01 1.6 կետով սահմանված կարգով:

7.2 C2 դասի հրդեհային վտանգավորության IV կարգի միահարկ շենքերում թույլատրվում է տեղավորել Ա եւ Բ կարգի 300 մ2 ընդհանուր մակերեսով սենքեր: Ընդ որում, նշված սենքերը պետք է առանձնացվեն հակահրդեհային 1-ին տիպի միջնորմներով եւ 3-րդ տիպի ծածկերով: Այդ սենքերի արտաքին պատերը պետք է լինեն Կ0 կամ Կ1 դասի:

Թույլատրվում է նախագծել Ա եւ Բ կարգի C2 եւ C3 դասի հրդեհային վտանգավորությամբ IV աստիճանի հրակայունության միահարկ, 75 մ2 ոչ ավել մակերեսով շարժունակ շենքեր:

իրդեհա- թյունը*	նույն	իրդեհային	սահմաններում
յին	մ	լաստիճանը	վտանգավո-
հատվա-		րության	
ծամասի		դասը	միահարկ երկհարկ եռահարկ
կարգը			եւ ավել

Ա, Բ	36		CO	չի	5200	3500
			սահմանափակվում			

	36	II	CO	չի	5200	3500
Ա			սահմանափակվում			
	24	III	CO	7800	3500	2600
	-	IV	CO	3500	-	-

	36	II	CO	չի	10400	7800
Բ			սահմանափակվում			
	24	III	CO	7800	3500	2600
	-	IV	CO	3500	-	-

	48	I, II	CO	չի	25000	7800
			սահմանափակվում		7800**	5200**
					10400	5200
Ծ	24	III	CO	25000	5200**	3600**
	18	IV	CO, C1	25000	10400	-
	18	IV	C2, C3	2600	2000	-
	12	V	չի	1200	600***	-
			նորմավորվում			

			2ի սահմանափակվում			
	54	I, II	CO	չի		
Գ	36	III	CO	սահմանափակվում		25000 10400
	30	III	C1	չի		
	24	IV	CO	սահմանափակվում		10400 7800
	18	IV	C1	չի		
			սահմանափակվում		10400 5200	
					6500	5200 -

			2ի սահմանափակվում			
	54	I, II	CO	չի		
	36	III	CO	սահմանափակվում		50000 15000
Դ	30	III	C1	չի		
	24	IV	CO, C1	սահմանափակվում		25000 10400
	18	IV	C2, C3	չի		
	12	V	չի	սահմանափակվում		25000 7800
			նորմավորվում		10400	7800 -
					2600	1500 -

* Սույն աղյուսակում շենքի բարձրությունը չափվում է առաջին հարկի հատակից | մինչև վերին հարկի առաստաղը, ընդգրկելով տեխնիկական հարկը, հարկի առաստաղի | փոփոխական բարձրության դեպքում ընդունվում է հարկի միջին բարձրությունը: | CO, C1 հրդեհային վտանգավորության դասի միահարկ շենքի բարձրությունը չի | նորմավորվում:

** Փայտամշակման արտադրությունների համար:

*** Մինչև չորս շրջանակով փայտասղոցման արտադրամասի, փայտանյութի առաջնային | մշակման փայտամշակման արտադրամասերի եւ փայտանյութի մանրացման կայանների | համար:

7.3 Մեկ շենքում կամ սենքում տարբեր պայթյունահրդեհային եւ հրդեհային վտանգավորության տեխնոլոգիական գործընթացների տեղաբաշխման դեպքում, պայթյունի եւ հրդեհի տարածման դեմ անհրաժեշտ է նախատեսել նախազգուշական միջոցառումներ: Այդ միջոցառումների արդյունավետությունը պետք է հիմնավորվի նախազօծի տեխնոլոգիական մասում՝ համաձայն ՀՀՇՆ II-8.04.01 7.3 կետի: Եթե նշված միջոցառումները բավականաչափ արդյունավետ չեն, ապա տարբեր պայթյունահրդեհային եւ հրդեհային վտանգավորության տեխնոլոգիական գործընթացները պետք է տեղաբաշխել առանձին սենքերում, ընդ որում, Ա, Բ, Վ1, Վ2, Վ3 տարբեր կարգի սենքերը, ինչպես նաեւ այդ սենքերը Վ4, Գ եւ Դ կարգի սենքերից ու միջանցքներից պետք է անջատել հետեւյալ տիպի հակահրդեհային միջնորմներով եւ հակահրդեհային ծածկերով.

ա/ I աստիճանի հրակայունությամբ շենքերում՝ 1-ին տիպի հակահրդեհային միջնապատերով, 2-րդ տիպի հակահրդեհային ծածկերով /միջհարկային եւ նկուղի վրա/,

բ/ II եւ III հրակայունության շենքերում՝ 1-ին տիպի հակահրդեհային միջնորմներով,

գ/ IV աստիճանի հրակայունության C0, C1 դասի հրդեհային վտանգավորությամբ շենքերում՝ 2-րդ տիպի հակահրդեհային միջնորմներով,

դ/ IV աստիճանի հրակայունության շենքերի C2, C3 դասի հրդեհային վտանգավորությամբ շենքերի Վ1-Վ3 կարգի սենքերում՝ 2-րդ տիպի հակահրդեհային միջնորմներով, Ա եւ Բ կարգի սենքերում՝ համապատասխան 7.2 կետի, 3-րդ տիպի հակահրդեհային ծածկերով /միջհարկային եւ նկուղի վրա/:

7.4 Նկուղները, որտեղ տեղաբաշխված են Վ1-Վ3 կարգի սենքեր, պետք է անջատվեն հակահրդեհային 1-ին տիպի միջնորմներով, յուրաքանչյուրը ոչ ավել 3000 մ² մակերեսով, ընդ որում յուրաքանչյուր մասի լայնությունը /հաշված արտաքին պատից/ չպետք է գերազանցի 30 մ: Նշված սենքերում, ծխաքաշի տեղադրման համար անհրաժեշտ է նախատեսել պատուհան՝ 0,75 մ ոչ պակաս լայնությամբ ու 1,2 մ բարձրությամբ 0,8 մ լայնություն ու 1,8 մ երկարություն ունեցող գետնափոսերով: Պատուհանների զույգարային մակերեսը պետք է ընդունել հատակի մակերեսի ոչ պակաս 0,2% չափով: Նկուղների վրա ծածկերը պետք է ունենան REI 45 ոչ պակաս հրակայունության սահման:

Միջանցքները պետք է ունենան 2 մ ոչ պակաս լայնություն եւ անմիջական ելք դեպի դուրս կամ ելք՝ մեկուսացված սանդղավանդակի միջով: Սենքերը միջանցքներից բաժանող միջնորմները պետք է լինեն 1-ին տիպի հակահրդեհային:

Վ1-Վ3 կարգի սենքերով նկուղները, որոնք տեխնոլոգիական պահանջներով չեն կարող տեղավորվել արտաքին պատերի մոտ, անհրաժեշտ է հակահրդեհային միջնորմներով բաժանվեն մասերի, ոչ ավել 1500 մ² մակերեսով, յուրաքանչյուրը ծխահեռացման հարմարանքով, ըստ ՀՀՇՆ IV-12.02.01:

7.5 Ա եւ Բ կարգի սենքերում չպետք է նախատեսել բոլոր տեսակի գնացքաքարշերի ներանց, իսկ Վ1-Վ3 կարգի սենքերում եւ Վ2, Վ3 դասի կոնստրուկցիաներով ծածկված սենքերում՝ շոգեքարշերի եւ ջերմաքարշերի ներանցը:

7.6 Ա եւ Բ կարգի սենքերի բոլոր հարկերում, վերելակների առջեւ անհրաժեշտ է նախատեսել օդի մշտական ճնշմամբ նախամուտք - անցախցեր: Ա եւ Բ կարգի շենքերի վերելակների մեքենայական բաժնում, ըստ ՀՀՇՆ IV-12.02.01, անհրաժեշտ է նախատեսել օդի մշտական ճնշում:

7.7 Ծածկերի եւ տեխնոլոգիական հարթակների հատվածները, որոնց վրա տեղակայվում են դյուրաբոցցավառվող, այրվող եւ թունավոր նյութեր պարունակող ապարատներ, կայանքներ եւ սարքավորանք, պետք է ունենան չայրվող նյութերից իրականացված կողեզրեր կամ տակդիրներ: Կողեզրերի բարձրությունը եւ տարածությունը կողեզրերի կամ տակդիրների միջեւ սահմանվում է նախազօծի տեխնոլոգիական մասով:

7.8 Չենիթային երդիկները, որոնց լուսաթափանց տարրերն իրականացվում են Ա3 եւ Ա4 խմբի նյութերով, թույլատրվում է կիրառել միայն ՉԱ եւ Ա1 հրդեհային վտանգավորությամբ նյութերից իրականացված ծածկերով եւ գետակոպձային պաշտպանիչ պատվածքով փաթեցրած տանիքով Վ4, Գ եւ Դ կարգի սենքերով I, II եւ III աստիճանի հրակայունության CO դասի հրդեհային վտանգավորությամբ շենքերում: Այդ երդիկների լուսաթափանց տարրերի ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի ծածկի ընդհանուր մակերեսի 15%, իսկ յուրաքանչյուր երդիկի մակերեսը,

լուսաթափանց տարրերի 20 կգ/մ2 ոչ ավել տեսակարար կշռի դեպքում պետք է լինի 12 մ2 ոչ ավել եւ լուսաթափանց տարրերի 10 կգ/մ2 ոչ ավել տեսակարար կշռի դեպքում` ոչ ավել 18 մ2: Ընդ որում, փաթթոցային ծածկը պետք է ունենա գետակոպձի պաշտպանիչ պատվածք:

Այդ երդիկների միջեւ հեռավորությունը /առլույս/ պետք է լինի 6 մ ոչ պակաս մինչեւ 18 մ2 բացվածքների դեպքում եւ 3 մ ոչ պակաս` մինչեւ 6 մ2 բացվածքների դեպքում:

Երդիկների համատեղ խմբերով տեղադրման դեպքում դրանք ընդունվում են որպես մեկ երդիկ, որին վերաբերում են նշված բոլոր սահմանափակումները:

Շենքի ծածկի վրա Ա3 եւ Ա4 լուսաթափանց լցանյութերով լցված երդիկների միջեւ, շենքի երկայնական եւ լայնական ուղղությամբ, յուրաքանչյուր 54 մ մեկ թողնում են 6 մ ոչ պակաս լայնությամբ անջրպետ: Հակահրդեհային պատերից մինչեւ նշված զենիթային երդիկների հեռավորությունը հորիզոնական ուղղությամբ պետք է լինի 5 մ ոչ պակաս:

7.9 3-րդ տիպի սանդղուղքները, որոնք նախատեսված են հրդեհաշեջ ստորաբաժանումների մոտեցման համար, պետք է ունենան ոչ պակաս 0,7 մ լայնություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1 ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ
- 2 ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ
- 3 ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
- 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ
- 5 ԾԱՎԱԼԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ
- 6 ՏԱՐԱՀԱՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՍԵՆՔԵՐԻՑ
- 7 ՀՐԴԵՀԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ